Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Ռազմավարական քաղաքականության վարչության պետ Լուսինե Ավետիսյանի հաշվետվությունը 2023 թվականի հունիսի 26-ից հունիսի 30-ը Իտալիայի Հանրապտություն գործուղման վերաբերյալ**

1. ***ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ***

Լուսինե Ավետիսյան

2. ***ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ***

Ռազմավարական քաղաքականության վարչության պետ

3. ***ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ***

Իտալիայի Հնարապետություն (ք. Վենետիկ) ,
2023 թվականի հունիսի 26-ից հունիսի 30-ը

4. ***ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ***

TAIEX ծրագիր, Եվրոպական հանձնաժողով և Իտալիայի Վենետո նահանգի շրջակա միջավայրի պահպանության տարածքային գործակալություն

5. ***ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ***

Մասնակցություն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասով TAIEX ուսուցողական այցին:

Ուսումնական այցի նպատակն է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության պատասխանատու աշխատակիցներին տրամադրել աջակցություն և ներկայացնել առաջարկություններ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և միջազգայի չափանիշներին և լավագույն փորձին համապատասխանող փորձագիտական կարողությունների բարելավման համար:

6. ***ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ***

Ուսումնական այցն անցկացվել է Վենետոյի շրջանի շրջակա միջավայրի պահպանության գործակալությունում (այսուհետ՝ ARPAV), 2023 թվականի հունիսի 26-ից հունիսի 28-ը: 5 անձից բաղկացած հայկական մասնագիտական թիմը ներկայացնում էին նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորփաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Մարտիրոսյանը, փորձագետներ՝ Հերիքնազ Մկրտչյանը և Վարդան Հարությունյանը, ինչպես նաև նախարարության իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ Լիանա Գրիգորյանը:

Օրակարգին համապատասխան առաջին երկու օրվա ընթացքում հայկական թիմի

մասնագետներին ARPAV-ի և Վենետիկի շրջանի ներկայացվել են հետևյալ բովանդակային թեմաները՝

- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ԵՄ օրենսդրության ներկայացում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման վերաբերյալ իտալական օրենսդրության ներկայացում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ազգային հանձնաժողով ներկայացված ծրագրի (իրական դեպքի) ընդհանրական վերլուծություն,
- տարածաշրջանային/մարզային շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ներկայացված ծրագրում (իրական դեպք) ջրի, թափոնի և մթնոլորտային օդի բաղադրիչների վերլուծություն,
- Վենետո նահանգի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ) իրականացնող ներքին կառույցի և ՇՄԱԳ տեխնիկական հանձանժողովի կառավարումը,
- Իտալիայի Վենետո նահանգի շրջակա միջավայրի պահպանության տարածքային գործակալության գործառույթների ներկայացում:

Երրորդ օրը կազմակերպվեց այցելություն ECO+ECO աղբի տեսակավորման կազմակերպության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթաց անցնող ծրագրի տեղամաս (Պորտո Մարգերայի արդյունաբերական գոտի):

Ուսուցողական այցի շրջանակներում ներկայացված թեմաների շուրջ կլոր սեղան-քննարկումների ընթացքում հայկական պատվիրակության կողմից ցուցաբերվել է ակտիվ մասնացություն, ներկայացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ նոր օրենքի դրույթները, քննարկվել են ՀՀ ու Իտալիայի Հանրապետության օրենսդրությունների միջև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի տարբերություններն ու նմանությունները: Առանձնացվեցին Հայաստանի համար կիրառելի լուծումները:

## ***7. <u>ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>***

Հանդիպումների ընթացքում կարևորվեց ՀՀ-ի և Իտալիայի Հանրապետության միջև փորձի փոխանակումը և փոխհամագործակցության արդյունավետությունը, ձեռք բերվեց հետագա համագործակցության շարունակականության պայմանավորվածություն: Բարձր գնահատելով TAIEX տեխնիկական աջակցության գործիքի ներքո ձեռք բերված մասնագիտական հմտությունները՝ իրականացվելիք հետագա ուսումնական այցերի շրջանակներում առաջարկվել է կիրառել առավել գործնական մասնակցություն ՇՄԱԳ գործընթացներում:

Ռազմավարական քաղաքականության վարչության պետ
Լուսինե Ավետիսյան

13.07.2023թ.